Ինչպէս գիտէք, Հիւսիսային Կովկասի գրաւումից յետոյ բոլշևիկները սկսեցին զօրքեր կենտրոնացնել մասամբ Վրաստանի, բայց գլխաւորապէս Ադրբէջանի սահմանների վրա. Ադրբէջանը կարծես ուշադրութիւն չէր դարձնում այդ երևոյթի վրա և իր ամբողջ ուժերը՝ բաղկացած 10,000 կանոնաւոր զօրքից և 10,000 կամաւորներից՝ ուղարկել էր Ղարաբաղ, որոնք և զբաղւած էին կոտորելով հայ խաղաղ ազգաբնակութիւնն ու աւերելով քաղաքներ ու գիւղեր, առանց ուշադրութեան առնելու հիւսիսային սահմանների վրա երևացող ուժը:

Ապրիլ 27-ին ադրբէջանեան 400 դինուորները նահանջում են Եալամայից, և բոլշևիկները, թուով 6000 հոգի, գրաւում են Խաչմազը և զրահապատներով առաջանում մինչև Բալաջարի: Ապրիլ 28-ին կատարւում է յեղաշրջումը. տեղական բոլշևիկեան կազմակերպութեան ներկայացուցիչները վերջնագիր են տալիս կառավարութեան՝ իշխանութիւնը յանձնելու իրենց: Խորհրդարանն ընդունում է վերջնագիրը և իշխանութիւնը յանձնում ռազմա-յեղափոխական կոմիտէին:

Նախքան յեղաշրջումը, Հայաստանի կառավարութիւնը դաշնակից պետութեանց ներկայացուցիչներից ստացաւ հետևեալ նոտան (կարդում է), որից պարզ երևում է, թէ Ադրբէջանի նախկին վարիչները ինչպիսի փորձեր են արել արդարացնելու իրենց թուլութիւնը հիւսիսային սահմանների վրա:

Ապրիլ 28-ի գիշերը Հայաստանի դիւանագիտական ներկայացուցչի պաշտօնակատար Թումանեանը հետևեալ նոտը հաղորդեց մեզ Թիֆլիսից, ուղիղ հեռագրաթելով.

«Ադրբէջանի կառավարութիւնը տեղեկացրել է Անդրկովկասի դաշնակից ներկայացուցիչներին, որ բոլշևիկեան զօրքերը խախտել են իր սահմանները, և ցոյց է տուել խռովութիւնների վտանգը Բաքւում: Իբրև հետևանք ադրբէջանեան կառավարութեան խնդրանքի, որ արդարացւում է հանգամանքներով, հրաւիրում ենք հայկական կառավարութեանը՝ տալ անյապաղ երաշխիքներ, որոնք թոյլ տային Ադրբէջանի կառավարութեան իր սպառնալիքի ենթակայ սահմանը փոխադրել այն զօրքերը, որոնք այժմ գտնւում են Ղարաբաղում և Հայաստանի սահմանակից ուրիշ վայրերում:

Կոմս դը-Մարտել, գնդ. Գաբբա, կոմանդոր Լիւֆ»:

Կառավարութիւնը այդ նոտային պատասխանեց հետևեալ ձևով.

«Ի պատասխան ձեր ապր. 27-ի հեռագրի, որով հրաւիրում էիք տալ Ադրբէջանի կառավարութեան երաշխիքներ, որոնք թոյլ տան նրան իր զօրքերը Ղարաբաղից փոխադրել բոլշևիկների դէմ կուելու համար, հայկական կառավարութիւնը պատիւ ունի յայտարարելու հետևեալը. փետր. 20-ից սկսած հայկական կառավարութիւնը ձեր անուն ուղղած իր բազմաթիւ յայտագրերով մատնանշել է այն աղէտաւոր հետևանքները, որոնք առաջ պիտի գային ադրբէջանեան կանոնաւոր զօրքերի և հրոսախմբերի կենտրոնացումով Ղարաբաղում, որ արւում էր Ղարաբաղը զէնքի ուժով վերջնականօրէն գրաւելու նպատակով, հակառակ անցեալ տարւայ օգ. 22-ի համաձայնութեան: Հայկական կառավարութիւնը, որ միշտ ձգտում է խաղաղ կենակցութեան դրացի հանրապետութիւնների հետ, բազմիցս դիմել է Ադրբէջանի կառավարութեան և դաշնակիցների ներկայացուցիչներին՝ խնդրելով առաջն առնել Ղարաբաղի արիւնհեղութեան, որը վերածւեց հայերի զանգւածային կոտորածի Ադրբէջանի սահմաններում: Ո՛չ խաղաղասիրութեամբ տոգորւած յաճախակի դիմումները, ո՛չ էլ, դժբախտաբար, դաշնակիցների կրկնակի նախազգուշացումները չկարողացան Ղարաբաղի